

ԱՇԽԱՐՀԻ ՏԽՐԱՀՌՉԱԿ

«ՀԱՐԿԱՅԻՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ»

DOI: 10.52174/2579-2989_2022.4.113

Աշխարհում միայն երկու անխուսափելի բան կա՝ մահը և հարկերը:

Բենջամին Ֆրանկլին

Հիմնաբառեր. «հարկային դրախտ», հարկային հանգրվան, օֆշորային տարածք, հարկերից խուսափում, սև ցուցակ, ֆինանսական գաղտնիության համաթիվ, կորպորատիվ հարկային դրախտի համաթիվ:

Աշխարհի մի խումբ երկրներում (տարածքային միավորներում) հարկային քաղաքականության, բանկային և ֆինանսական գաղտնիության և նմանատիպ հարցերում զգալի տարբերությունները ֆինանսական միջոցների ահռելի կուտակումների և հարկային չարաշահումների առիթ են դարձել: Այդպիսի երկրները (տարածքները) ստացել են «հարկային դրախտներ» բնորոշումը: Սակայն, եթե հարկային բեռն ամեն կերպ թեթևացնելու մրցավազքում հայտնված գործարար հարվածի համար նմանօրինակ տարածքներն ապահովում են «դրախտային» պայմաններ, ապա ակնկալվող հարկային եկամուտների զգալի մասից զրկված պետությունների համար դրանք իրապես «դժոխային» են: Թերևս, հենց այդ հանգամանքով է պայմանավորված «հարկային դրախտների» և օֆշորների նկատմամբ հետաքրքրությունն ամբողջ աշխարհում:

Հոդվածում մեկտեղվել և վերլուծվել են միջազգային տարբեր կառույցների կողմից հարկային հանգրվանի կարգավիճակ ստացած երկրների (տարածքների) «սև» և «մոխրագույն» ցանկերն ու դրանց դասակարգումներն ըստ ֆինանսական գաղտնիության և կորպորատիվ «հարկային դրախտի» համաթիվերի:

Թեև «հարկային դրախտ» հասկացությունը հստակ սահմանված չէ, ընդունված է համարել, որ դրա շրջանակներում են դիտարկվում այն երկրները, որտեղ օտարերկրացիների կամ օտարերկրյա ընկերությունների հարկումը կատարվում է շահավետ




Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական արեւախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ:

Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 47 գիտական և 12 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

 <https://orcid.org/0000-0002-5854-2473>

պայմաններով՝ ծագման երկրում հարկային բեռը նվազեցնելու կամ դրանից խուսափելու համար: «Հարկային դրախտներ» են համարվում ոչ միայն այն երկրները, որոնք առանձնակի ցածր հարկեր են գանձում եկամտի որոշակի տեսակներից: Դա նաև տեղական հարկային մարմիններից միջոցները թաքցնելու տարածված ձև է՝ փողերը «հարմար» երկրներում տեղակայելու դիտակետից: Այս համատեքստում հաճախ հիշատակվում է Շվեյցարիան՝ բանկային տեղեկատվության խիստ գաղտնիության պահպանման պատճառով:

Համաշխարհային տնտեսական ֆորումի (WEF) տվյալներով՝ վերազգային կորպորացիաների (ՎԱԿ-երի) եկամտի 40%-ը կամ 650 մլրդ ԱՄՆ դոլար տեղափոխվում է «հարկային դրախտներ», ինչի հետևանքով կորսվում է շուրջ 200 մլրդ համաշխարհային հարկային եկամուտ¹:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աշխարհի բազմազգ ընկերությունները շուրջ 12 տրիլիոն ԱՄՆ դոլար են ներդրել «դատարկ կորպորատիվ կադապարների» (Կեղծ կորպորացիաների)² մեջ, իսկ սա նշանակում է, որ ամբողջ աշխարհում ՕՈՒՆ-ի 40%-ը բացարձակապես արհեստածին է³: Միաժամանակ, ֆինանսապես անկայուն և նավթ արդյունահանող որոշ երկրների քաղաքացիներ անհամաչափ մեծ մասնաբաժին ունեն «հարկային դրախտներում» պահվող 7 տրիլիոն դոլար անձնական հարստության մեջ⁴: Հետաքրքրական է, որ մի քանի հայտնի

«հարկային դրախտներում» է աշխարհի «Ֆանտոմային ՕՈՒՆ-ի» ճնշող մեծամասնությունը. Լյուքսեմբուրգում և Նիդերլանդներում կենտրոնացած է նմանօրինակ ներդրումների գրեթե կեսը: Եվ եթե ցուցակում ընդգրկենք նաև Հոնկոնգը, Բրիտանական Վիրջինյան, Բերմուդյան և Կայմանյան կղզիները, Սինգապուրը, Շվեյցարիան, Իռլանդիան և Մավրիկիոսը, ապա այս 10 սուբյեկտին միասին բաժին կընկնի աշխարհում ֆանտոմային ներդրումների ավելի քան 85 տոկոսը⁵:

Օրինակ՝ ընդամենը 600 հազար բնակիչ ունեցող Լյուքսեմբուրգը նույնքան օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ) է «հյուրընկալում», որքան Միացյալ Նահանգները և շատ ավելին, քան Չինաստանը: Փաստորեն, Լյուքսեմբուրգի շուրջ 4 տրլն ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ-ից բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 6,6 միլիոն դոլար⁶: ՕՈՒՆ-ի այսպիսի ծավալը Լյուքսեմբուրգի գաճաճ տնտեսության համար առնվազն տարօրինակ է: Եթե պաշտոնական վիճակագրությունը հավաստի է, ուրեմն՝ ինչ-որ բան այն չէ...

Թեև ընդունված է համարել, որ հարկային հանգրվանների կամ օֆշորային տարածքների գրավչությունը պայմանավորված է աննախադեպ հարկային արտոնությունների տրամադրմամբ, այդուհանդերձ, ֆինանսական միջոցների համար «ապահով թաքստոցի» որոնումներում առավել մեծ ուշադրություն է դարձվում ֆինանսական հոսքերի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությանը: Առավել ևս, որ ոչ բոլոր օֆշորային տարածքներում

¹ Wier L., Tax havens cost governments \$200 billion a year. It's time to change the way global tax works, World Economic Forum, February 27, 2020 / <https://www.weforum.org/agenda/2020/02/how-do-corporate-tax-havens-work/>

² Կեղծ կորպորացիան կամ ընկերությունը (shell corporation, empty corporate shell) գոյություն ունի միայն թղթի վրա, չունի գրասենյակ կամ աշխատակիցներ, բայց կարող է ունենալ բանկային հաշիվ, կատարել պահիվ ներդրումներ կամ լինել գրանցված սեփականատեր այնպիսի ակտիվների, ինչպիսիք են մտավոր սեփականությունը կամ նավերը: Կեղծ ընկերությունները պարբերաբար օգտագործվում են հարկերից խուսափելու, հարկային բազայի խեղաթուրման, փողերի լվացման կամ անանունության ապահովման նպատակով: Ընդ որում, անանունության ապահովումը ոչ միշտ է պայմանավորված հարկերից խուսափելու միտումով, այն կարող է պահանջվել անձնական ակտիվներն ուրիշներից, օրինակ՝ պետական կառույցներից, պարտատերերից կամ նույնիսկ ամուսնոց (ամուսնալուծության դեպքում) պաշտպանելու համար:

³ Damgaard J., Elkjaer T., Elkjaer T., Piercing the Veil, IMF, Finance & Development Journal, June 2018, pp. 50-53.

⁴ Inside the World of Global Tax Havens and Offshore Banking - IMF F&D Magazine - June 2018 | Volume 55 | Number 2, pp. 51-53.

⁵ Damgaard J., Elkjaer T., Johannesen N., The Rise of Phantom Investment: Empty corporate shells in tax havens undermine tax collection in advanced, emerging market, and developing economies, IMF, Finance & Development Journal, September 2019, pp. 11-13.

⁶ Damgaard J., Elkjaer T., Johannesen N., The Rise of Phantom Investment: Empty corporate shells in tax havens undermine tax collection in advanced, emerging market, and developing economies, IMF, Finance & Development Journal, September 2019, pp. 12.

են կիրառվում հարկերի զրոյական կամ ցածր դրույքաչափեր:

2009 թվականից սկսած՝ Հարկային արդարադատության ցանցը (The Tax Justice Network) երկու տարին մեկ հրապարակում է Ֆինանսական գաղտնիության համաթիվը (Financial Secrecy Index – FSI), որը վարկանշավորում է սուբյեկտներին՝ ըստ անհատների ֆինանսներն օրենքի գերակայությունից թաքցնելու գործում աջակցություն ցուցաբերելու «մեղսունակության» աստիճանի: Ֆինանսական գաղտնիությունը հեշտացնում է հարկային չարաշահումները, թույլ է տալիս փողերի վաճույքում և խաթարում մարդկության իրավունքները: Ցուցանիշը ներկայացնում է ֆինանսական գաղտնիության աշխարհի խոշորագույն «մատակարարներին» և ուշադրություն դարձնում այն օրենքներին, որոնք կառավարությունները կարող են փոխել նվազեցնելու իրենց ներդրումը ֆինանսական գաղտնիության ապահովման մեջ:

Ֆինանսական գաղտնիության համաթիվի 2022 թվականի դասակարգման աղյուսակն առաջնորդում է ԱՄՆ-ն, որին հետևում են Շվեյցարիան և Սինգապուրը⁷: Ընդ որում, վերջին երկուսն ընդգրկվել են նաև աշխարհի տխրահռչակ «հարկային դրախտների» ցանկում:

Աշխարհի հարկային հանգրվանները բնութագրող, թերևս, առավել «մասնագիտացած» ցուցանիշ է կորպորատիվ հարկային դրախտի համաթիվը՝ ԿՀԴՀ-ն (Corporate Tax Haven Index - CTHI)⁸, որը վարկանշավորում է տարածքային սուբյեկտներին և պետությունները՝ ըստ շահութահարկը (կորպորատիվ եկամտահարկը) չվճարելու հարցում բազմազգ կորպորացիաներին ցուցաբերած աջակցության ծավալների: ԿՀԴ համաթիվը մանրակրկիտ գնահատում է յուրաքանչյուր սուբյեկտի հարկային և ֆինանսական համակարգերը՝ հստակ պատկերացում ձևավորելով համաշխարհային կորպորատիվ հարկերի չարաշահման խոշորագույն գործոնների մասին և ընդգծելով այն օրենքներն ու քաղաքականությունները, որոնք

քաղաքականություն մշակողները կարող են փոփոխել՝ իրենց երկրի կամ տարածքային միավորի կողմից կորպորատիվ հարկերի չարաշահման հնարավորությունը նվազեցնելու նպատակով:

Կորպորատիվ «հարկային դրախտի» համաթիվի 2021 թ. արդյունքներով՝ աշխարհում կորպորատիվ հարկերի չարաշահման ռիսկերն ամենից շատ կենտրոնացած են Բրիտանական Վիրջինյան, Կայմանյան և Բերմուդյան կղզիներում, որոնց հաջորդում են Նիդերլանդները, Շվեյցարիան ու Լյուքսեմբուրգը: Ուշագրավ է այն փաստը, որ եթե ԿՀԴ համաթիվի վարկանշավորման առաջին եռյակը գլխավորող կղզիներում տնտեսական գործունեությունից հարկեր չեն գանձվում, ապա նույնը չի կարելի պնդել եվրոպական երկրների մասին, որտեղ գործող հարկերի դրույքաչափերն ամենևին էլ «դրախտային» չեն: Այսպես՝ Նիդերլանդներում կիրառվում է կորպորատիվ հարկի կամ շահութահարկի 25% և անհատական եկամտային հարկի 49.5% աննախադեպ դրույքաչափ, Շվեյցարիայում շահութահարկը 14.93% է, եկամտահարկը՝ 40%, իսկ Լյուքսեմբուրգում գործում են այդ հարկատեսակների համապատասխանաբար՝ 24.9% և 45.78% դրույքաչափեր (աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ում ամփոփվել են հարկային հանգրվանները կամ օֆշորները լավագույնս բնութագրող՝ ներկայում արդիական համաթիվերի ամենաթարմ վարկանշավորումներն ու հեղինակավոր միջազգային կառույցների կողմից տարբեր չափանիշներով «հարկային դրախտի» կարգավիճակ ստացած երկրների (տարածքների) ցանկերը: Միաժամանակ, համեմատության համար աղյուսակում տեղ են գտել առանձնացված տարածքներում կիրառվող շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերը:

Աշխարհի հարկային հանգրվանների կամ «հարկային դրախտների» պաշտոնական ցուցակները պարբերաբար թարմացվում են: Ընդ որում, միջազգային տարբեր կառույցներ տարբեր չափանիշներով

¹ Gradov I.A. Virtualization of vocational education: social order, Collection of scientific works. Nizhni Novgorod, 2012. P. 4-11.

² Carrillo, FJ (2014). What Knowledge-based Development stands for? -A position paper, International Journal of Knowledge-Based Development 5 (4), 402-421.

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Աշխարհի ամենահայտնի «հարկային դրախտները»

Երկիր/ դարածք	Համաթվեր և դասակարգումներ					Դրույքաչափեր		
	ՖԳՀ դիրքը (FSI) ⁹	ԿՀԴՀ (CTHI) ¹⁰	Oxfam ¹¹	ՖԱԹՖ (FATF) ¹²	ԵՄ (EU) ¹³	Ներդրումների դիմաց քաղաքացիության կամ ռեզիդենտության (CBI/RBI) շնորհում ¹⁴	Կորպորատիվ հարկ (շահու- թահարկ) ¹⁵	Եկամտա- յին հարկ ¹⁶
Շվեյցարիա	2	2261 (5.1%)	✓				14.93 %	40 %
Սինգապուր	3	1714 (3.9%)	✓				17 %	22 %
Հոնկոնգ	4	1805 (4.1%)	✓				16.5 %	15 %
Լյուքսեմբուրգ	5	1815 (4.1%)	✓				24.94 %	45.78 %
ԱՄԷ	8	1665 (3.8%)		✓		✓	0 %	0 %
Բրիտանական Վիրջինյան կղզ.	9	2854 (6.4%)	✓				-	-
Նիդեռլանդներ	12	2454 (5.5%)	✓				25 %	49.5 %
Կայմանյան կղզ.	14	2653 (6.0%)	✓	✓			0 %	0 %
Կիպրոս	15	1379 (3.1%)	✓			✓	12.5 %	35 %
Պանամա	18	411 (0.93%)		✓	✓		25 %	25 %
Ջերսի	19	1724 (3.9%)	✓				-	20 %
Բահամներ	22	1454 (3.3%)	✓			✓	0 %	0 %
Իռլանդիա	27	1459 (3.3%)	✓				12.5 %	48 %
Մալթա	38	763 (1.7%)		✓		✓	35 %	35 %
Բերմուդյան կղզ.	49	2508 (5.7%)	✓				0 %	0 %
Մավրիկիոս	55	1013 (2.3%)	✓				15 %	15 %
Թուրքիա	59	-		✓			23 %	40 %
Բահրեյն	60	-				✓	0 %	0 %
Բարբադոս	63	-	✓	✓		✓	5.5 %	28.5 %
Հորդանան	65	-		✓			20 %	30 %
Սենթ Քիթս և Նևիս	68	-				✓	33 %	-
Ֆիլիպիններ	72	-		✓			30 %	35 %
Պակիստան	74	-		✓			29 %	35 %
Մարոկկո	79	-		✓			31 %	38 %
Վիրջինյան կղզիներ	87	-			✓		-	-
Սեյշելներ	89	2.508 (0.37%)				✓	33 %	15 %
Կյուրասաո	90	353 (0.8%)	✓				-	-
Սամոա	104	-			✓		27 %	27 %
Վանատաու	112	-			✓	✓	0 %	-
Թերքս և Թայքոս կղզիներ	120	166 (0.65%)				✓	-	-
Ֆիջի	121	-			✓		20 %	20 %
Ալբանիա	123	-		✓			15 %	23 %
Անտիգուա և Բարբուդա	127	-				✓	25 %	-
Ղոմինիկա	128	-				✓	25 %	-
Տրինիդադ և Տոբագո	130	-			✓		30 %	25 %

⁹ Tax Justice Network, Financial Secrecy Index 2022 (Ranking) / <https://fsi.taxjustice.net/>
¹⁰ Corporate Tax Haven Index - 2021 Results / <https://cthi.taxjustice.net/cthi2021/country-list.pdf>
¹¹ OXFAM, Tax Battles: The dangerous global Race to the Bottom on Corporate Tax, 12 December 2016 / <https://www.oxfam.org.au/wp-content/uploads/2016/12/bp-race-to-bottom-corporate-tax-121216-en-EMBARGO.pdf>
¹² FATF, Jurisdictions under Increased Monitoring - March 2022 / <https://www.fatf-gafi.org/publications/high-risk-and-other-monitored-jurisdictions/documents/increased-monitoring-march-2022.html>
¹³ EU list of non-cooperative jurisdictions for tax purposes (adopted by the Council on 24 February 2022), <https://www.consilium.europa.eu/media/54471/council-conclusions-24-february-2022.pdf>
¹⁴ OECD, Residence/Citizenship by investment schemes / <https://www.oecd.org/tax/automatic-exchange/crs-implementation-and-assistance/residence-citizenship-by-investment/>
¹⁵ List of Countries by Corporate Tax Rate / <https://tradingeconomics.com/country-list/corporate-tax-rate>, Corporate Tax Rates around the World, 2021 / <https://taxfoundation.org/publications/corporate-tax-rates-around-the-world/#:~:text=Since%20then%20countries%20have%20recognized%20the%20impact%20that,of%20the%20world%2C%20including%20in%20the%20largest%20economies>
¹⁶ List of Countries by Personal Income Tax Rate / <https://tradingeconomics.com/country-list/personal-income-tax-rate>, Worldwide Tax Summaries, Personal income tax (PIT) rates / <https://taxsummaries.pwc.com/quick-charts/personal-income-tax-pit-rates>

Գրենադա	132	-				✓	28 %	-
Սուրբ Լուչիա	133	-				✓	30 %	30 %
Գոամ	134	-				✓	21 %	-
Ամերիկյան Սամոա	135	-				✓	-	27 %
Պալաու	-	-				✓	-	-
Եմեն	-	-		✓			20 %	-
Ուգանդա	-	-		✓			30 %	40 %
Սիրիա	-	-		✓			28 %	22 %
Նիկարագուա	-	-		✓			30 %	30 %
Ջամայկա	-	-		✓			25 %	30 %
Կամբոջա	-	-		✓			20 %	20 %
Բոլիվիան Ֆասո	-	-		✓			28 %	-
Հաիթի	-	-		✓			30 %	-
Մալի	-	-		✓			30 %	-
Մյանմար	-	-		✓			25 %	25 %
Սենեգալ	-	-		✓			30 %	40 %
Հվ. Սուդան	-	-		✓			35 %	15 %

են առաջնորդվում այս կամ այն երկրին (տարածքին) «դրախտային» կարգավիճակ շնորհելիս: Ամենահայտնին և, թերևս, ամենաընդգրկունն «Օքսֆամ» (Oxfam) միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հրապարակվող ցանկն է: Վերջինս աշխարհի ավելի քան 90 երկրում գործող 18 կազմակերպությունների միավորում է, որի նպատակն աղքատության խնդիրների և դրան նպաստող անարդարությունների լուծումն է:

«Օքսֆամի» կորպորատիվ «հարկային դրախտների» «աշխարհի վատագույն» ցուցակում ընդգրկված երկրները կիրառում են կորպորատիվ հարկերից խուսափելը հեշտացնող ամենաձայրահեղ ձևերը, մասնավորապես՝ երեք տեսակի վստակար հարկային քաղաքականություն, այն է՝ կորպորատիվ հարկի ցածր դրույքաչափեր, հարկային արտոնություններ, ինչպես նաև հարկերից խուսափելու դեմ միջազգային ջանքերի հետ համագործակցության անտեսում:

Կորպորատիվ «հարկային դրախտները» հանգեցնում են հարկային եկամուտների ահռելի կորստի, և դրանց օգտագործումը շատ ընկերությունների համար դառնում է բնականոն գործարար փորձ: «Օքսֆամի» վերլուծությունից պարզվել է, որ աշխարհի խոշորագույն ընկերությունների 90 տոկոսը ներկայություն է ունեցել

առնվազն մեկ «հարկային դրախտում»¹⁷: Միավորված ազգերի կազմակերպության Առևտրի և զարգացման կոնֆերանսի (UNCTAD) գնահատականներով՝ 2021 թ. դրությամբ բազմազգ կորպորացիաներն օՖշորային ֆինանսական կենտրոններ են տեղափոխել իրենց եկամուտների շուրջ 40%-ը¹⁸:

Միջազգայնորեն ամենաճանաչվածներից են Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (FATF) խստացված մշտադիտարկման տակ գտնվող տարածքների «սև» և «մոխրագույն» ցուցակները¹⁹: FATF-ը միջկառավարական անկախ մարմին է, որը մշակում է համաաշխարհային ֆինանսական համակարգը փողերի վլացումից, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ՝ սատարելով դրանց իրագործմանը: FATF-ի հանձնարարականները ճանաչում են գտել որպես փողերի վլացման (ՓԼ) և ահաբեկչության ֆինանսավորման (ԱՖ) դեմ պայքարի համաաշխարհային չափորոշիչ: FATF-ի 2022 թվականի «մոխրագույն» ցուցակն ընդգրկում է 23 երկիր (տարածք), և միայն մեկ երկիր՝ Մալթան, կարողացել է այս տարի դուրս գալ խստացված մշտադիտարկման տակ գտնվող սուբյեկտների ցուցակից:

Եվրամիությունը, իր հերթին, թե՛ իր

¹⁷ OXFAM, Where are the worst tax havens in the world? / <https://www.oxfam.org.au/inequality/worlds-worst-corporate-tax-havens/>

¹⁸ UNCTAD (2022). World Investment Report 2022: International Tax Reforms and Sustainable Investment, United Nations, Geneva, p. 106.

¹⁹ FATF, Jurisdictions under Increased Monitoring - June 2022 / <https://www.fatf-gafi.org/publications/high-risk-and-other-monitored-jurisdictions/documents/increased-monitoring-june-2022.html>

իսկ շրջանակներում, թե՛ միջազգային մակարդակում ջանում է խթանել ու ամրապնդել արդյունավետ և թափանցիկ հարկային կառավարման մոտեցումների կիրառումը՝ ձգտելով նվազեցնել հարկերից խուսափելու կամ հարկային խարդախությունների արատավոր երևույթները: ԵՄ տնտեսական և ֆինանսական հարցերի խորհուրդը (Ecofin) 2022 թվականի փետրվարի 22-ին հրապարակել է չհամագործակցող տարածքների ցանկ²⁰ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները:

1. Հարկային թափանցիկություն:

Հարկային թափանցիկությունը ենթադրում է հարկային տեղեկատվության ավտոմատ փոխանակման կամ միասնական հաշվետվողական համակարգերի միջոցով երկրների (տարածքների) կողմից տվյալների փոխանակում, ըստ պահանջի հարկային տեղեկատվության փոխանցման հնարավորություն, ինչպես նաև ՏՀՀԿ՝ հարկային հարցերում փոխադարձ վարչական աջակցության մասին բազմակողմ կոնվենցիայի վավերացման պարտավորվածություն:

2. Արդար հարկում:

Արդար հարկման սկզբունքը որդեգրած երկրները չեն կարող կիրառել վնասակար արտոնյալ հարկային միջոցառումներ, չպետք է նպաստեն օֆշորային կառույցներին կամ պայմանավորվածություններին, որոնք ձգտում են շահույթ ներգրավել՝ առանց իրական տնտեսական գործունեության:

3. Հարկման բազայի խեղաթյուրման և շահույթների տեղաշարժին խոչընդոտող նվազագույն չափորոշիչների կիրառում (OECD anti-BEPS minimum standards):

Երկրները (տարածքային միավորները) պետք է պարտավորվեն իրականացնել հարկման բազայի խեղաթյուրմանը և շահույթների տեղաշարժին խոչընդոտող նվազագույն չափորոշիչներ, որոնք խրախուսում են առավել արդյունավետորեն

պայքարել վնասակար հարկային փորձի դեմ, խուսափել կրկնակի հարկման համաձայնագրերով արտոնությունների (օգուտների) անհարկի չարաշահումներից, նոր ուղիներ մշակել վեճերի լուծման համար և այլն:

Ըստ վերոնշյալ չափանիշների՝ 2022 թ.-ին ԵՄ-ն խնդրահարույց է համարել Ամերիկյան Սամոան, Ֆիջին, Գուամը, Պալաուն, Պանաման, Սամոան, Տրինիդադ և Տոբագոն, ԱՄՆ Վիրջինյան կղզիները և Վանատաուն²¹ (աղյուսակ 1):

Տարբեր երկրների հարկային համակարգերի միջև առկա բացերն ու անհամապատասխանությունները լայնորեն օգտագործում են հիմնականում բազմազգ ընկերությունները՝ հանգեցնելով ներքին հարկային բազայի խեղաթյուրմանը և շահույթների տեղաշարժին, որոնք, ի վերջո, ազդում են բոլոր երկրների վրա: Հարկման բազայի խեղաթյուրման և շահույթների տեղաշարժի (base erosion profit shifting-BEPS) արատավոր փորձը երկրների համար արժենում է տարեկան 100-240 մլրդ ԱՄՆ դոլար կորցրած եկամուտ, որը համարժեք է կորպորատիվ եկամտահարկից (շահութահարկից) ստացվող համաշխարհային հասույթի 4-10%-ին²²:

2019 թ. փետրվարին ՀՀ-ն դարձավ BEPS-ի անդամ մոտ 135 երկրներից ու տարածքներից մեկը՝ պարտավորվելով ներդնել գործողությունների նվազագույն փաթեթը, այն է՝ 4 գործողություն հնարավոր 15-ից: Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրի՝ դրանք ենթադրում են այնպիսի օրենսդրական և վարչարարական կարգավորումների սահմանում ու կիրառում, որոնք թույլ կտան շահույթը հարկել այնտեղ, որտեղ իրականացվում է շահույթ ձևավորելուն անհրաժեշտ տնտեսական գործունեություն և որտեղ ստեղծվում է արժեք²³:

ՏՀՀԿ-ն հրապարակում է խոշոր ներ-

²⁰ EU list of non-cooperative jurisdictions for tax purposes (adopted by the Council on 24 February 2022) - <https://www.consilium.europa.eu/en/policies/eu-list-of-non-cooperative-jurisdictions/>

²¹ EU list of non-cooperative jurisdictions for tax purposes (adopted by the Council on 24 February 2022) - <https://www.consilium.europa.eu/en/policies/eu-list-of-non-cooperative-jurisdictions/>

²² International collaboration to end tax avoidance - <https://www.oecd.org/tax/beps/>

²³ «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր», Երևան, 2020, հաստատված 4.02.2021 թ., էջ 117 (ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 2140-Լ և 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1830-Լ որոշումների հավելվածներ):

դրումների դիմաց քաղաքացիություն կամ ռեզիդենտություն (residence and citizenship by investment (CBI/RBI)) շնորհող խնդրահարույց երկրների ցանկը: Թեև նմանատիպ կառուցակարգերն անհատներին թույլ են տալիս միանգամայն օրինական ճանապարհով ստանալ քաղաքացիություն կամ բնակության իրավունք տեղական ներդրումների միջոցով կամ հաստատագրված վճարի դիմաց, դրանք կարող են նաև չարաշահումների առիթ դառնալ՝ անհատներին ընծեռելով իրենց ակտիվներն օֆշորում թաքցնելու և ընդհանուր հաշվետվողականության SՀԶԿ/G20 չափորոշիչները (CRS) շրջանցելու հնարավորություն: Մասնավորապես՝ CBI/RBI սխեմաների միջոցով ձեռք բերված նույնականացման քարտերը և այլ փաստաթղթեր կարող են չարաշահվել՝ անհատի հարկային

բնակության իրավասություն(ներ)ը խեղաթյուրելու, եկամուտների մի մասը թաքցնելու և այդպիսով՝ եկամտային հարկերից խուսափելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, շնորհիվ «հարկային դրախտի» կարգավիճակին «արժանանալու» չափանիշների բազմազանության, հազվադեպ են հանդիպում միաժամանակ մի քանի ցանկերում ներառված երկրներ (տարածքներ), այդուհանդերձ, այդպիսիք կան. մասնավորապես՝ Արաբական Միացյալ Էմիրությունները, Կայմանյան կղզիները, Կիպրոսը, Պանաման, Բահամները, Մալթան և Վանատաուն զուգահեռաբար 2 տարբեր ցանկերում են, իսկ Բարբադոսին «բախտ» է վիճակվել ընդգրկվելու «հարկային դրախտների» 3 տարբեր ցանկերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր», Եր., 2020, հաստատված 04.02.2021թ., էջ 117 (<< կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 2140-Լ և 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1830-Լ որոշումների հավելվածներ):
2. Corporate Tax Haven Index - 2021 Results, <https://cthi.taxjustice.net/cthi2021/country-list.pdf>
3. Corporate Tax Rates around the World, 2021, <https://taxfoundation.org/publicationscorporate-tax-rates-around-the-world/#:~:text=Since%20then%20countries%20have%20recognized%20the%20impact%20that,of%20the%20world%2C%20including%20in%20the%20largest%20economies>
4. Damgaard J., Elkjaer T., Elkjaer T., Piercing the Veil, IMF, Finance & Development Journal, June 2018, pp. 50-53.
5. Damgaard J., Elkjaer T., Johannesen N., The Rise of Phantom Investment: Empty corporate shells in tax havens undermine tax collection in advanced, emerging market, and developing economies, Finance & Development Journal, September 2019, pp. 11-13.
6. EU list of non-cooperative jurisdictions for tax purposes (adopted by the Council on 24 February 2022) / <https://www.consilium.europa.eu/media/54471/council-conclusions-24-february-2022.pdf>
7. FATF, Jurisdictions under Increased Monitoring - June 2022, <https://www.fatf-gafi.org/publications/high-risk-and-other-monitored-jurisdictions/documents/increased-monitoring-june-2022.html>
8. Inside the World of Global Tax Havens and Offshore Banking - IMF F&D Magazine - June 2018 | Volume 55 | Number 2, pp. 51-53.
9. International collaboration to end tax avoidance, <https://www.oecd.org/tax/beps/>
10. List of Countries by Corporate Tax Rate, <https://tradingeconomics.com/country-list/corporate-tax-rate>
11. List of Countries by Personal Income Tax Rate, <https://tradingeconomics.com/country-list/personal-income-tax-rate>
12. OECD, Residence/Citizenship by investment schemes, <https://www.oecd.org/tax/automatic-exchange/crs-implementation-and-assistance/residence-citizenship-by-investment/>
13. OXFAM, Tax Battles: The dangerous global Race to the Bottom on Corporate Tax, 12 December 2016, <https://www.oxfam.org.au/wp-content/uploads/2016/12/bp-race-to-bottom-corporate-tax-121216-en-EMBARGO.pdf>
14. OXFAM, Where are the worst tax havens in the world? <https://www.oxfam.org.au/inequality/worlds-worst-corporate-tax-havens>
15. Tax Justice Network, Financial Secrecy Index

- 2022 (Ranking),
<https://fsi.taxjustice.net>
16. UNCTAD (2022). World Investment Report 2022: International Tax Reforms and Sustainable Investment, United Nations, Geneva
17. Wier L., Tax havens cost governments \$200 billion a year. It's time to change the way
<https://www.weforum.org/agenda/2020/02/how-do-corporate-tax-havens-work>
18. Worldwide Tax Summaries, Personal income tax (PIT) rates,
<https://taxsummaries.pwc.com/quick-charts/personal-income-tax-pit-rates>

Анна ПАХЛЯН

*Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
 кандидат экономических наук, доцент*

А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

ПРЕСЛОВУТЫЕ «НАЛОГОВЫЕ ГАВАНИ» МИРА

Существенные различия в налоговой политике, банковской и финансовой тайне и аналогичные вопросы привели к колоссальному накоплению финансовых ресурсов и налоговым злоупотреблениям в ряде стран/юрисдикций по всему миру. Такие страны/юрисдикции характеризуются как «налоговые гавани». Однако, если такие территории обеспечивают «райские» условия для бизнес-сектора, который всячески стремится снизить налоговое бремя, то для государств, лишенных значительной части ожидаемых налоговых поступлений, они являются настоящим «адом». Возможно, в этом причина всеобщего интереса к налоговым гаваням и офшорам.

В статье составлены и проанализированы «черные» и «серые» списки стран/юрисдикций, получивших статус налоговых убежищ различными международными структурами, и их классификации по индексам финансовой секретности и корпоративных налоговых убежищ.

Ключевые слова: *налоговая гавань, налоговое убежище, офшорная зона, уклонение от уплаты налогов, черный список, индекс финансовой секретности, индекс корпоративного налогового убежища*

Anna PAKHLYAN

*Researcher at «Amberd» Research Center,
 PhD in Economics, Associate Professor, ASUE*

DO YOU KNOW THAT...?

NOTORIOUS «TAX HAVENS» OF THE WORLD

Significant differences in tax policy, banking and financial secrecy and similar issues have led to colossal accumulation of financial resources and tax abuses in a number of countries/jurisdictions around the world. Such countries/jurisdictions are characterized as «tax havens». However, if such territories provide «paradise» conditions for the business sector, which strives in every way to reduce the tax burden, then for states deprived of a significant part of the expected tax revenues, they are a real «hell». Perhaps, this is the reason for the universal interest in tax havens and offshore.

The paper compiles and analyzes «black» and «gray» lists of countries/jurisdictions that have received the status of tax havens by various international structures, and their classification according to the indices of financial secrecy and corporate tax havens.

Keywords: *Tax haven, offshore zone, tax evasion, black list, Financial Secrecy Index, Corporate Tax Haven Index*